

տանի որ միւս ֆահանգներն ալ նոյնպէս բնեն: Զայս կատարելով ոչ միայն պէտք է, անտարակոյս, մեզմէ յանդիմանուի, ալ նաեւ այս մասին շատ գովելի է, վասնզի կ'ընէ ինչ որ Հոռովակեան Եկեղեցին կը բարոզէ, որպէս բացայայտ է Փլորենտեան եւ Տրիդենտեան Ժողովներէ, եւ զոր միշտ միւս բոլոր քէ արեւմտեան քէ արեւելեան եկեղեցիները՝ առաքելներու ժամանակներէն ի վեր պահեցին: Այս բանիս եթէ հաստատապէս կ'ուզես յարիլ, եւ իրապէս հետեւիլ վարդապետութեանը այս Սուրբ Հռոմէական Գահին, զոր կը խոստովանիս հիմնուած Պետրոսէ հաւատքի ժայռին վրայ, մենք քեզ պիտի պարուրենք նոյնքան բարեացակամութեամբ, որքան սովոր ենք ընդունիլ այն անձերը, որոնք լեւելի հոգիներու փրկութեան այնքան վնասակար բաժանումները, կը բազման հաստատապէս յարիլ եւ միանալ այս Սուրբ Եկեղեցւոյն, որ միակ ուսուցիչն է նշմարիտ հաւատքի: Զայս ամբողջովին կը յուսանք կրօնասիրութենէդ եւ բարեպաշտութենէդ, մանաւանդ երբ նամակիդ վերջաւորութեան բոլոր խրնդիլը կը բուխս քողով մեր դատաստանին եւ կամփին, ինչպէս մեծապէս վայել է: Քու եռանդիդ մասին նոյն համոզումն ունէր մեր նախորդը, որուն սիրոյն համեմատութեամբ, մեր մէջ պիտի չգտնես նուազ բարեացակամութիւն եւ սէր ի Տէր, ամէնութեք, ըստ կարի: Սակայն այս ամէնը պիտի կարենաս աւելի մանրամասնօրէն լսել մեր յարգելի